

Հանրային իրազեկում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 4-ի շրջանակներում իրականացվելիք նախագծերի վերաբերյալ

22.02.2016



Այսօր՝ փետրվարի 22-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի, մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի, մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցավ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 4-ի շրջանակներում նախագծող խորհրդատու „Սպեա Ինջեյներիա Էուրոպեա Ս.պ.Ա. և ԱյԱրԴի Ինջինիրինգ Ս.ր.Լ.,, ՀՁ (այսուհետ՝ Նախագծող խորհրդատու) կողմից իրականացված Արտաշատ-Քաջարան (կմ28+912-կմ333+000) ճանապարհահատվածի տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքների հանրային իրազեկման քննարկում-ներկայացում, շահառուների հետ, որը նախաձեռնել է Նախագծող խորհրդատուն: Հանրային հանդիպմանը մասնակցում էին նաև ծրագրի երկայնքով տեղակայված ՀՀ Վայոց ձորի մարզի մի շարք համայնքների ղեկավարներ և այլ իրավասու ներկայացուցիչներ: Հանդիպման բանախոսներն էին Ծրագրի ղեկավար Աթիլիո Սիվիերոն, „Ճաննախագիծ,, ինստիտուտ ՍՊԸ ինժեներ Արթուր Սանոյանը, ծրագրի իրականացման կազմակերպության սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետ Սոնա Պողոսյանը:

Նրանց կողմից ներկայացեց կազմվելիք նախագծի 2 ընտրանքային տարբերակները: Ծավալվեց քննարկում, որի ընթացքում շահառուներն իրենց հետքաքրքրող հարցերն ուղղեցին կազմակերպիչներին:

Նշվեց, որ ընտրանքային տարբերակներից որևէ մեկի ընտրության դեպքում, կկազմակերպվի հանրային քննարկումներ, ըստ համայնքների և շահագործման գոտում գտնվող անհատ շահառուների: